ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑՉԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ավարտական հետազոտական աշխատանք

Թեմա՝ **Վերլուծական և համադրական մտածողության դերն ու նշանակությունը արտագրություն կատարելիս**

Առարկա՝ **Մանկավարժություն և տարրական ուսուցման մեթոդիկա**

Հեղինակ՝ **Տանյա Վարդանյան**

Ուսումնական հաստատություն՝ **Դարբասի միջնակարգ դպրոց**

Ղեկավար՝ **Ֆլորա Հովհաննիսյան**

2023

Բովանդակություն

1. Նախաբան էջ 2
2. Հետազոտական համատեքստ էջ 3-6
3. Գործնական համատեքստ էջ 9-10
4. Հետազոտական ընթացք էջ 11-14
5. Տվյալների մշակում և վերլուծություն էջ 15-16
6. Ամփոփում էջ 17

Գրականություն էջ 18

Հավելվածներ (նշել էջերը) էջ 18

Նախաբան

Նպատակը կթելադրի ուղին։
Ցանկության դեպքում միշտ ուղի կգտնվի,
չցանկանալու դեպքում՝ պատճառաբանություն։
Ջորջ Պոյայի

Դպրոցում ուսուցչի աշխատանքի և աշակերտների ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով և հմտություններով։ Արդի ժամանակաշրջանում, երբ կյանքն օրեցօր առաջընթաց է ապրում, դպրոցի կարևորագույն խնդիրներից են դառնում աշակերտների ճանաչողական հետաքրքրու-թյունների, նրանց ստեղծագործական մտածողության, ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը։ Գիտելիքների յուրացումն ու մտապահումը, որոնք ավանդաբար համարվել են ուսուցման հիմնական նպատակ, այսօր վերածվել են ուսուցման հիմնական նպատակին հասնելու միջոցների։ Ուսուցման նպատակի նման ընկալումը չափազանց արդիական է և միաժամանակ ունի շատ խոր ու հին արմատներ։

Ուսուցումը հետաքրքիր դարձնելու համար, անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական , ճանաչողական նշանակություն։

Այս ամենի հիմքում գտնվում է նաև գրավոր խոսքի զարգացումը։ Այսինքն շատ կարևոր է զարգացնել վերլուծական , համադրական մտածողությունները գրավոր աշխատանքների ժամանակ։

Ես ինքս, տարրական դասարանում դասավանդելիս, կանգնեցի մի խնդրի առաջ , որ գրավոր աշխատանքները չկանոնակարգված և թերի էին կատարվում։ Երեխաները շատ անտարբեր և մեխանիկական աշխատանք էի կատարում , չգիտակցելով և չկարևորելով գրավոր աշխատանքների դերը ։ Իմ առջև խնդիր դրեցի , որ պետք է զարգացնել գրավոր խոսքը , փորձեցի գտնել, մշակել հնարներ և մեթոդներ , որոնք կիրառելով իմ դասերի

ժամանակ պետք է զարգացնեին այն։ Իհարկե , պետք է ասեմ , որ գրավոր խոսքի զարգացման համար շատ երկար ժամանակ է պահանջվում, որի համար անհրաժեշտ է մեծ համբերություն և ճիշտ քայլերի մշակում։ Ամենագլխավոր նպատակներիցս մեկն այն էր, որ առաջնայինը պետք է աշխատանքները սկսել արտագրություններից, զարգացնել արտագրությունների կատարման փուլերը, ընթացքը և որ աշխատանքները լինեն ճիշտ , նպատակային։

«Ճիշտ նպատակներն են բերում գոհացուցիչ վերջնարդյունքին» առաջ գնալով այս կարգախոսով և սկսեցի հերթական դասերիս պլանավորումներն ու վարումները։

Կատարելով այս հետազոտական աշխատանքը՝ ես գտա մի ուղի , որն օգնեց հասնել իմ վերջնարդյունքին ։

Հետազոտական համատեքստ

Ի՞նչ է մտածողությունը

Մտածողությունն իրենից ներկայացնում է վերլուծության , համադրության, վերացարկման և ընդհանրացման գործընթացների ամբողջություն։ Վերլուծությունը և համադրությունը միևնույն մտածողական գործընթացի երկու կողմերն են։ Նրանք փոխկապակցված և փոխպայմանավորված են ։

Վերլուծական մտածողություն

Մեզանից յուրաքանչյուրն իր տեսակի մեջ առանձնահատուկ է ու դրանով պայմանավորված ունի անհատական մտածողություն, ինչը դրսևորվում է գործողությունների ստրատեգիայի , աշխարհընկալման , շրջապատող միջավայրի ու մարդկանց հետ հարաբերություններում։

Գիտնականներն առանձնացնում են մտածողության մի քանի տեսակ՝

1. Իդիալիստական
2. Ռեալիստական
3. Սինթետիկ / համադրական /
4. Պրագմատիկ

5. Անալիտիկ / վերլուծական /

Չկան այնպիսի մարդիկ , որոնք պատկանում են այս կամ այն տիպին , սակայն յուրաքանչյուրի մոտ սրանցից որևէ մեկը միշտ գերակշռում է։

Վերլուծական մտածողությունը սերտորեն կապված է տրամաբանության հետ։ Այն պատասխանատու է ստացվող տվյալների վերլուծության , համեմատության համար, իսկ տրամաբանական մտածողությունը հիմնվում է պատճառահետևանքային կապերի վրա։

Վերլուծական մտածողությունն ընթանում է երկու փուլով՝

- ստեղծագործական պրոցես, որն ուղեկցվում է նոր գիտելիքների ու տեղեկատվության փնտրտուքով
- ֆորմալ փուլ, որն ուղեկցվում է տվյալների վերլուծությամբ ու համադրմամբ, եզրահանգումներով։

Ինչո՞ւ է անհրաժեշտ զարգացնել վերլուծական մտածողությունը

Վերլուծական մտածողությունն անհրաժեշտ է յուրաքանչյուրիս ՝ տեղեկատվությունը լավ ընկալելու և հիշելու , եզրահանգումներ անելու, որոշումներ կայացնելու համար։

Վերլուծական մտածողության ձևավորումն օգնում է ինչպես առօրյայում, այնպես էլ կրթության ու աշխատանքային գործունեության մեջ։

Վերլուծական մտածողության զարգացումը

Վերլուծական մտածողությունը կարելի է զարգացնել մի քանի եղանակով՝

- շաբաթական մեկ անգամ մարզել ուղեղը տարատեսակ վարժությունների միջոցով
- ազատ ժամանակ ունենալու դեպքում խաղալ համակարգչային զարգացնող խաղեր

- հետևել նորություններին. փորձել փաստերը վերլուծել, գտնել պատճառահետևանքային կապերը, եզրահանգումներ անել ու փորձել մշակել խնդիրները լուծելու յուրովի մոտեցումները
- հավաքել փազլներ, դրանք նույնպես նպաստում են ուղեղի մարզմանը
- Խաղալ այնպիսի խաղեր, որոնք օգնում են վերլուծական մտածողությանը, այսինքն , որոնք հնարավորություն են տալիս հաջորդ քայլերը մտածելու, գործելակերպ ընտրելու համար։

Համադրական մտածողություն / վերլուծություն

Մտածողության համադրական տիպը, այն է որի մեջ գերակշռողը համադրական գործողությունն է ։

Վերլուծական և համադրական կարողությունների զարգացման համար մեծ դեր են կատարում ինտերակտիվ խաղերը։ Այսինքն ՝ խաղեր, որոնք նպատակ ունեն զարգացնելու երեխայի պատկերային մտածողությունը, տրամաբանությունը, դիտողականությունը, մարզելու հիշողությունը, արագ կողմնորոշվելու և կենտրոնանալու կարողությունները և այլն։

Օրինակ՝ « Հանելուկներ» , որոնք ճանաչողական գիտելիքները հարստացնող, տրամաբանական մտածողությունը և վերլուծական-համադրական կարողությունները զարգացնող խաղ են։

«Հանելուկ» խաղը նպաստում է ճանաչողական գիտելիքների հարստացմանն ու ամրակայմանը, տրամաբանական մտածողության և վերլուծական-համադրական կարողությունների ձևավորմանը։ Այն կարող է կիրառվել ինչպես տանը, այնպես էլ դասագործընթացում ոչ միայն հանելուկ գուշակելու, այլև հնչյունային վերլուծություն կատարելու , հնչյուններն ու դրանց տառերը համադրելու, բառերը ինքնաթելադրությամբ գրելու կարողությունները զարգացնելու նպատակով։ Ընդ որում, կիրառելի է թե՛ գրաճանաչության փուլում՝ անցած տառերի սահմանում աշխատելու համար , թե՛ հետայբբենական շրջանում։

Ինչպե՞ս զարգացնել գրավոր խոսքում այս մտածողությունները տարրական դասարաններում

Գրելը որպես մտավոր գործողություն շատ ավելի բարդ աշխատանք է , քան կարդալը։ Գրելու համար անհրաժեշտ են հետևյալ մասնակի գործողությունները՝ կամքի մղում, գրելիքի նյութական բովանդակության մտապահում, գրելուն զուգահեռ ընթացող լուռ ընթերցում կամ գրելիքի ձայնային վերհիշում, հնչյուններին համապատասխան տառերի ձևերի պատկերացում, տվյալ տառերը գծող կամ ձևավորվող գրամոտորային շարժումների պատկերացում, ինչպես նաև այս բոլոր բաղադրիչների աստիճանական միավորում ու ավտոմատացում։

Որպեսզի աշակերտը կարողանա ճիշտ գրել , ինչպես Գ. Էդիլյանն էր ասում. **« Նախ պետք է պարզել բառի հնչյունային կազմը և հետո միայն այն գրել»։**

Գրավոր խոսքն ունի **չորս** կողմ՝

ա/ տեխնիկական կամ գրելու համար անհրաժեշտ նորմաների պահպանում, առանց որի հնարավոր չէ պատկերացնել գրելու գործողությունը

բ/գրաֆիկական կամ տառերի ու գրի վայելչագրական կողմի պահպանում

գ/ ուղղագրական կամ բառի հնչյունային կազմի տառային արտահայտության ճիշտ պահպանում

դ/միտք կամ բովանդակություն , որը գրի առնելիք մտքերի ճիշտ պահպանումն է ։

Երեխային գրել սովորեցնելու համար հենց սկզբից ևեթ նրա մեջ պետք է միաժամանակ ձևավորել

3 կարգի կարողություններ՝

1. տեխնիկական
2. գրաֆիկական
3. ուղղագրական

Գրելու կարողության տիրապետման աշխատանքը կամ գրելու ալգորիթմի ձևավորումը ըստ Ե. Վ. Գուրյանովի անցնում է **3** փուլերով կամ աստիճաններով՝

- մասնիկային
- տառային

- կապակցված գրության , որոնց հետագայում հաջորդում է վարժ գրությունը և արագությունը։

Գրելու ալգորիթմի ձևավորման բնագավառում շրջանցվում է մասնիկային կամ տառամասնիկային աստիճանը, և գրելու ուսուցումն սկսվում է տառային աստիճանից կամ ամբողջական տառի գրությունից; Ճիշտ է ,տառը գրելուց առաջ աշակերտներին ցույց է տրվում, թե տառը ինչ մասնիկներից է ձևավորվում և ինչ հաջորդականությամբ, սակայն բուն գրելու գործողության ժամանակ վերցվում է ամբողջական տառը։

Տառի գրության ուսուցման ժամանակ ևս հնչյունային վերլուծություն պետք է կատարել՝ այս անգամ անջատված հնչյունի դիմաց դնելով նրա ձեռագիր տառերը։ Աշակերտին ցույց է տրվում, թե ինչ հաջորդականությամբ պետք է համադրել այդ մասնիկները , որպեսզի տառը ստացվի, նշվում է , թե այդ մասնիկը կամ տառն ամբողջովին մինչ այդ անցած տառերից որին է նման և ինչով։

Բառի գրության ուսուցումը համեմատաբար ավելի դժվար է , որովհետև այստեղ ծագում է նաև նոր տառերի հետ համաչափության մեջ դնելու հարցը, որն առանձին տառի գրության ժամանակ կարող է բոլորովին չլինել։

Բառը գրելուց առաջ երեխան պետք է ընկալի ու հասկանա ինչպես նրա բառիմաստը, այնպես էլ հնչյունային ու տառային կազմը, որպեսզի այն ճիշտ գրի, գրելու ընթացքում անհրաժեշտ վերլուծություններ ու համադրություններ կատարի։ Դրա համար բառը նախապես պետք է կազմել շարժական տառերով, վանկային ու հնչյունային վերլուծության ենթարկել, որպեսզի երեխաները ճիշտ ընկալեն բառի կազմությունը, կանխվեն հնարավոր սխալները, երեխաների մեջ մշակվեն ինքնահսկողության ու ինքնաստուգման կարողություններ։

Գրելուն նախորդող նախապատրաստական աշխատանքի անհրաժեշտությունը հատկապես ավելի մեծ է թելադրություն գրելիս։

Արտագրությունից թելադրությանն անցնելու նախապատրաստական հետաքրքիր վարժություն է առաջարկել Գ. Էդիլյանը՝ հիշողությամբ գրել սովորեցնելու համար։

Նա առաջարկում էր բառը գրել գրատախտակին, կարդալ ու վերլուծել տալ, իսկ ապա մաքրել, որպեսզի երեխաներն այն հիշողությամբ գրեն։ Երբ բառի գրությանը վարժվում են , կարելի է տալ բառակապակցություն, համառոտ ու ընդարձակ նախադասություններ՝ աստիճանաբար մեծացնելով գրելիք միավորը։ Երեխաներին պետք է սովորեցնել ինչպես

գրելիս մտքում հնչյուններով հեգելը՝ որպես բառերի մեջ տառերը բաց թողնելը կանխելու միջոց, այնպես էլ վանկերով մտքում ինքն իրեն թելադրելը, որպես գրելու տեխնիկային տիրապետելու միջոց։

Նախադասության և կապակցված նյութի գրության ուսուցումը ևս իր առանձնահատկություններն ունի, որովհետև այն կապակցված է նաև գրելու տեխնիկայի կատարելագործման և կետադրության պահպանման հետ։ Նախադասությունը մեծատառով սկսելը և նախադասության վերջում վերջակետ դնելը պետք է երեխայի մեջ վերածվի գործնական կարողության և ոչ թե մնա ուղղագրական կանոնի սերտում, որից քիչ օգուտ կա։ Նախադասության գրության ժամանակ պետք է պահպանվեն նաև բառամիջյան տարածությունները, գրի համաչափությունն ու թեքությունը։

Նախադասության գրությունից քիչ է տարբերվում կապակցված նյութի գրությունը, որը գրաճանաչության շրջանում սահմանափակվում է 1-2 կամ լավագույն դեպքում 3-4 նախադասությամբ՝ 10-12 բառի սահմաններում։

Այդ կապակցությամբ երեխաներին պետք է սովորեցնել կարմիր գծի կամ տողի պահպանումը, նախադասությունների միջև միջանկյալ տարածություններ թողնելը, տողը շարունակել կամ լրիվ օգտագործելը և այլն։ Վայելչագրական պահանջների տեսակետից գրաճանաչության շրջանում մինչև այժմ ընդունված էր միայն անջատ գրությունը, իսկ այժմ թույլատրելի է համարվում նաև կապակցված գրության կամ նրա տարրերի գործադրությունը։

Կապակցված գրությունը գրելու տեմպի զգալի արագացում է բերում և նպաստում է գրելու տեխնիկայի հետագայի կատարելագործմանը։

Լեզվական , տրամաբանական վարժությունները շատ կարևոր են երեխայի խոսքի զարգացման, վերարտադրության համար։ Դրանց նպատակը երեխաների վերացական մտածողության զարգացումն ու կատարելագործումն է, որպեսզի այս տարիքից երեխան սովորի գործադրել մտածողության հիմնական ձևերը՝

- համեմատությունը
- վերլուծությունը և համադրությունը
- ընդհանրացումն ու սահմանափակումը։

Աշակերտի խոսքի զարգացմանը մեծապես նպաստում են նաև ընդօրինակման և ստեղծագործական բնույթի արտագրությունները, շուտասելուկները, ուղղախոսության

կանոնների ճիշտ կիրառմամբ բառախաղերի արտասանությունը, ունկնդրած ստեղծագործության վերաբերյալ կարծիքների և տպավորությունների փոխանակումը, հիշողությամբ կամ ստեղծագործաբար, ինչպես նաև գեղարվեստական տարբեր ստեղծագործությունների ընթերցումը։

Գործնական համատեքստ

Մայրենիի տարրական դասընթացի հիմնական նպատակներից մեկը գրավոր խոսքի մշակումն է, գրելու կարողությունների զարգացումը։ Գրավոր խոսք կառուցելու կարողությունների ձևավորման և զարգացման նպատակով օգտագործվում է գրավորի **չորս** հիմնական տեսակ.

1. Արտագրություն
2. Թելադրություն
3. Փոխադրություն
4. Շարադրություն

Ըստ իմ գործնական աշխատանքի նախատեսեցի կանգ առնել արտագրություն տեսակին։ Նպատակս էր՝ դասարանում զարգացնել արտագրությունների կատարման գործընթացը։ Արտագրելիս սովորողը պետք է իրականացնի մի քանի գործողություն՝

- տեսնի գրելիք բառի պատկերը
- հասկանա իմաստը
- ենթարկի հնչյունային վերլուծության
- ձեռքի որոշակի շարժումներով գրի և տեսնի իր գրած բառապատկերը։

Արտագրությունները կարող են անցկացվել ինչպես տպագիր , այնպես էլ՝ ձեռագիր տեքստից։

Արտագրությունները հիմնականում լինում են երկու տեսակի՝

1. ընդօրինակման
2. ստեղծագործական

Ես ընտրեցի ստեղծագործական արտագրության տեսակը և ձեռագիր՝ արտագրել գրատախտակից։

Ըստ այս բնույթի , այսինքն ստեղծագործական արտագրությունները մեծ կիրառություն ունեն տարրական դասարաններում։

Ստեղծագործական են կոչվում այն պատճառով, որ բառերը, նախադասությունները և տեքստերն արտագրելու աշխատանքը զուգորդվում է ուղղագրական , լեզվաբանական , բառաիմաստային , բառակազմական բնույթի աշխատանքներով, այսինքն՝ աշակերտը աշխատում է 2 ուղղությամբ՝ և՛ արտագրում է , և՛ որոշակի առաջադրանք կատարում, որի արդյունքում բնագրերը հաճախ լուրջ փոփոխության են ենթարկվում։

Ստեղծագործական արտագրության ընթացքում որևէ խնդիր է դրվում, որի լուծման համար աշակերտը պետք է առաջադրված նյութը մտքում վերլուծության ենթարկի, վերհիշի անցած ուղղագրական կանոններն ու լեզվական գիտելիքները, բազմակողմանիորեն և խորությամբ հասկանա տեքստը, ապա արտագրի։

Կարող են հանձնարարվել ուղղագրական , քերականական , տրամաբանական և ոճական առաջադրանքներ ունեցող հետևյալ արտագրությունները։

1. Արտագրել՝ ընտրելով պահանջվող բառերը , նախադասությունները
2. Արտագրել՝ խմբավորելով տրված բառերը, նախադասությունները
3. Արտագրել՝ ընդգծելով պահանջվող բառերը, նախադասությունները
4. Արտագրել՝ լրացնելով բաց թողնված տառերը
5. Արտագրել՝ տեղադրելով բաց թողնված բառերը
6. Արտագրել՝ փոփոխելով բառերը, նախադասությունները, տեքստը։

Նշեմ, որ իրականացրեցի ՝ արտագրել և լրացնել բաց թողնված տառերը արտագրության տեսակը։

Այսպիսի արտագրության համար պետք է վերցնել այնպիսի տեքստ, որտեղ լինեն երկու և ավելի ուղղագրական կանոններին վերաբերող բառեր, որպեսզի աշակերտներն ընտրություն կատարելու հնարավորություն ունենան։ Բաց թողնելով ուղղագրական տեսանկյունից կասկած առաջացնող տառերը՝

հանձնարարվում է արտագրել ամբողջ տեքստը՝ լրացնելով այդ տառերը։ Այսպիսի աշխատանքն աշակերտից պահանջում է երևույթները տարբերակելու, աշխատանքն ինքնուրույն ու գիտակցորեն կատարելու կարողություն։ Աշխատանքը սկսելուց առաջ պետք է մշակվի նաև արտագրություն անցկացնելու մեթոդական քայլաշար.

1. Տեքստն ընթերցվում է նախ ուսուցչի կողմից, ապա աշակերտների / 1-2 /
2. 2-3 հարցի միջոցով ուսուցիչը ստուգում է , թե որքանով են աշակերտները հասկացել ընթերցածը / բովանդակությունը /
3. Արտագրության կանոնների կրկնություն

   ա/ յուրաքանչյուր նախադասություն պետք է ընթերցվի

   բ/ հնարավորինս մտապահվի

   գ/ գրի / ինքնաթելադրի վանկերով կամ բառերով /

   դ/ կատարի ստուգում

Նույն ձևով շարունակվում է աշխատանքը երկրորդ և հաջորդ նախադասությունների հետ ։

4. Սովորողի կողմից տեքստի ինքնուրույն գրառում
5. Ինքնաստուգում / ստուգել ամբողջական տեքստը և համեմատել բնագրի հետ / ։

Հետազոտության ընթացք

Հետազոտական աշխատանքի գործնական աշխատանքը՝ դասի վարումն անցկացրեցի չորրորդ դասարանում։ Դասի թեման գրավոր աշխատանք ՝ արտագրություն։ Մինչև դասի սկսելը արտագրության տեքստը գրել էի գրատախտակին և փակել վարագույրով։

Դասը սկսվեց, ներկայացրեցի կատարվելիք աշխատանքի ընթացքը, որից հետո բացեցի գրատախտակը։ Եվ ըստ մշակված մեթոդական քայլաշարի կատարեցինք աշխատանքը։

Աշխատանքի վերջում կան նաև առաջադրանքներ, որոնք ստուգում են երեխայի քերականական գիտելիքները։

Երեխաներին տրվեց ժամանակ և սկսեցին կատարել հանձնարարությունը։

Թեմա ՝ Արտագրություն

Դասի տիպը ՝ գրավոր աշխատանք

Դասի տևողությունը ՝ 45 րոպե

Արտագրություն

Արտագրի՛ր տեքստը՝ լրացնելով բաց թողնված **գ** կամ **ք** տառերը։

Դպրոցում եր-չախումբը պատրաստվում էր համեր- ի։Երեխաները կար-ի բերեցին բեմը։ Նրանց օգնեցին ավա- ընկերները։ Բեմի ներ- նում երեխաները զրուցեցին հանդիսատեսի հետ։ Ամենալավ զրուցակիցը փո- րիկ Սար- իսն էր։

/ 10 միավոր/

Առաջադրանքներ՝

1, Տեքստից դու՛րս գրիր առարկա ցույց տվող երկու բառ և գրի՛ր դրանց տրվող հարցերը։

/ 4 միավոր/

ա/ ----------

բ/ ----------

2. Տրված բառաշարքից դու՛րս գրիր միայն հասարակ անունները։

/2 միավոր/

Անահիտ, դերձակ, Վանաձոր, Արաքս, քաղաք, Գյումրի։

---

3. Տեքստից դու՛րս գրիր անձ ցույց տվող երկու բառ։

/ 4 միավոր/

ա/ ----------

բ/ ----------

միավոր

Գնահատական՝ ----

Աշխատանքի ընթացքը՝

1. Տեքստը մեկ անգամ ես ընթերցեցի, որից հետո՝ երկու աշակերտ։

2. Տեքստը նորից փակեցի վարագույրով և կատարեցի հարցադրում.

ա / Որտե՞ղ էր երգչախումբը պատրաստվում համերգի։

բ/ Ի՞նչ տեղի ունեցավ բեմի ներքևում։

գ/ Ո՞վ էր փոքրիկ զրուցակիցը։

Հարցադրման նպատակս էր՝ ևս մեկ անգամ երեխաների ուշադրությունը բերել այն բառերին, որոնք ուղղագրական էին և որ պետք է հենց այդ բառերում լրացնեին բաց թողնված տառերը։ Պարզել, արդյո՞ք նրանք հասկացել էին տեքստի բովանդակությունը, թե՞ ոչ։

3. Արտագրության կանոնների կրկնություն։

Այս քայլը կատարում եմ , որպեսզի համոզվեմ, աշակերտը կկարողանա՞ ճիշտ կատարել արտագրությունը, թե՞ նրա աշխատանքը կլինի ուղղակի մեխանիկական : Ես այս ժամանակ կիրառում եմ հետևյալ մեթոդը՝ **մատիկների խաղը**, որն անվանում ենք ՝ **« 4 մատիկներ»** :

Բոլորը բարձր պահում են իրենց չորս մատիկները, ծալում և նշում յուրաքանչյուր մատիկի գործողությունը / քայլերը կատարվում է յուրաքանչյուր նախադասության համար / :

« Չորս մատիկները»

1. Կարդում ենք / կարդում են նախադասությունը՝ հիշելով սկիզբն ու վերջը/

2. Մտապահում ենք / հնարավորինս մտապահում ամբողջ նախադասությունը կամ բառը, արտահայտությունը/
3. Գրում ենք / ինքնաթելադրելով վանկերով կամ բառերով/
4. Ստուգում ենք /կարդում ամբողջ գրված նախադասությունը և համեմատում բնագրի հետ/։

Այս մեթոդն օգնեց երեխաներին կատարել իրենց հանձնարարությունը՝ իրենց մեջ առաջացնելով հետաքրքրություն։ Այնպիսի տպավորություն էր , կարծես բոլորը դա ավելի շատ ընդունել էին որպես խաղ և ոչ թե գրավոր աշխատանքի կատարում։ Այսինքն , այն որ խաղը բերում է մտածողության զարգացման, դա արդեն ակնհայտ էր։

Հետաքրքիրն այն էր, որ շատերը միշտ դժկամությամբ էին կատարում նման աշխատանքները, իսկ այս « 4 մատիկներ»- ը նրանց ոգևորում էին և փորձում առաջ անցնել իրենց ընկերներից։

Գրավոր աշխատանքի կատարման ժամանակ անգամ նկատելի էր այն, որ աշակերտը մշտապես նայում էր իր մատիկների հերթականության պահպանմանը, ծալում , հիշում աշխատանքի քայլաշարը։

Իհարկե, մեծամասնությունը շատ ակտիվ էր , սակայն եղան աշակերտներ, որոնք չէին պահպանում քայլաշարը և նրանց աշխատանքը լինում էր որպես արտատպում։

Չնայած այս ամենի , ես իմ առջև դրված խնդիրը համարում եմ կատարված, որովհետև ես ճիշտ նպատակներից հասա վերջնարդյունքին։ Այն է , որ արտագրության ժամանակ երեխաները դժվարանում էին, աշխատանքը լինում էր անհետաքրքիր, ձանձրալի , ոչ արդյունավետ, իսկ հիմա նրանք կատարում են մեծ սիրով ։

Դասին ներկա էին նաև դպրոցի տնօրենը, փոխտնօրենը և ուսուցիչներ, որոնց հետաքրքրում էր, թե ինչպես կարելի է խաղային մեթոդով երեխաներին տանել դեպի գրավոր աշխատանքի կատարման՝ զարգացնելով վերլուծական, համադրական մտածողությունները։

Հնչեցին կարծիքներ, և նշվեց , որ շատ կարևոր է զարգացնել մտածողությունները գրավոր խոսքում։

Գրավոր աշխատանքների արդյունքները գոհացնող էին ։

Նկարներ դասընթացից՝

Ի դեպ, սա ցուցադրվող դասի օրն է, որտեղ ներկայացվում է որպես վերջնարդյունքին հասած աշխատանք։

Ինչպես արդեն շարադրանքումս նշել էի, , զարագացնել գրավոր խոսքը դա մեկ դասի ընթացքում չենք կարող և պետք է մի քանի հերթական դասաժամ, որոնք պիտի լինեն կանոնակարգված և պլանավորած քայլերով։



Տվյալների մշակում և վերլուծություն



Ըստ այս դիագրամի երևում է իմ դասարանի պատկերը մինչ խնդրի կատարումը ։

Դասարանում սովորում են **8 աշակերտ** / 100 % /։

Գրավոր աշխատանքների ժամանակ աշխատանքը

- կարողանում են կատարել 3 աշակերտ / 37 % /
- դժվարանում են կատարել **3** աշակերտ / 38 % /
- չի կարողանում **2** աշակերտ / 25 % /



Ըստ այս դիագրամի երևում է իմ դասարանի պատկերը խնդրի լուծումից հետո։

Դասարանում սովորում են **8 աշակերտ** /100 % /։

Գրավոր աշխատանքների ժամանակ աշխատանքը

- կարողանում են կատարել **6** աշակերտ / 75 % /
- դժվարանում են կատարել **1** աշակերտ / 12% /
- չի կարողանում **1** աշակերտ / 13% /

Չնայած եղան շատ դժվարություններ, սակայն դրանք հաղթահարելի էին։

Եզրակացություն

Ինչպես արդեն նշեցինք, ուսումնական հաջողությունների արդյունքները չափվում են ձեռք բերված գիտելիքներով, կարողություններով ու հմտություններով: Եվ, որպեսզի ուսուցումը դարձնենք հետաքրքիր , ապա անհրաժեշտ է գտնել ուսուցման այնպիսի հնարներ, որոնք ոչ միայն ցանկալի ու հետաքրքիր լինեն երեխաների համար, այլև ունենան ուսուցողական , ճանաչողական նշանակություն: Արդի ժամանակաշրջանում կյանքն ամեն օր առաջընթաց է ապրում, և դրա համար դպրոցի կարևորագույն խնդիրներից պետք է լինի աշակերտի ճանաչողական հետքրքրությունների , նրանց ստեղծագործական մտածողության , ինքնուրույն որոշումներ կայացնելու կարողությունների ձևավորումն ու զարգացումը:Միաժամանակ այսօր աշակերտակենտրոն դպրոցի գերնպատակը՝ ինքնուրույն , ազատ ու դատողաբար մտածող անհատի ձևավորումն ու դաստիարակումն է:

Եվ տեսնելով իմ աշխատանքի սկզբնական և վերջնական արդյունքները ևս մեկ անգամ համոզվեցի , որ շատ արդյունավետ է նորարարական մեթոդները:

Ըստ իմ աշխատանքի նաև շատ կարևոր էր , որ գրավոր աշխատանքները լինեն մեթոդապես ճիշտ կազմակերպված: Եթե երեխային ճիշտ չսովորեցնենք անգամ արտագրության մեթոդական շղթան, ապա նա ինքնուրույն , ինքնաբուխ և անգիտակցաբար կհորինի այն, որն, իհարկե, կլինի ոչ ճիշտ, սակայն արագ կերպով կյուրացվի երեխայի կողմից և կվերածվի տեքստի ընդօրինակման մեխանիկական հմտության: Սրանից խուսափելու համար պետք է հենց սկզբից կատարվի արտագրության պլանավորված ուսուցում և երեխաներին ծանոթացվի համապատասխան կանոններին:

Անշու՛շտ,անհրաժեշտ է , որ երեխաները ոչ միայն իմանան այդ կանոնները, այլև կարողանան գործնականում կիրառել դրանք:

Օգտագործված գրականության ցանկ

1. Ա. Տեր-Գրիգորյան
Գրավոր աշխատանքները տարրական դասարաններում Երևան 1961

2. Ա. Տեր-Գրիգորյան
Հայոց լեզվի մեթոդիկա Երևան 1980

3. Ջուլիետա Գյուլամիրյան
Արտագրությունների, թելադրությունների, փոխադրությունների, շարադրությունների ձեռնարկ տարրական դպրոցի համար Երևան 2009

Հավելված

1. http://5fan.ru/wievjob.php?id=38497

2.https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%84%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6#

3.https://www.internest.am/6798/%D5%BE%D5%A5%D6%80%D5%AC%D5%B8%D6%82%D5%AE%D5%A1%D5%AF%D5%A1%D5%B6-%D5%B4%D5%BF%D5%A1%D5%AE%D5%B8%D5%B2%D5%B8%D6%82%D5%A9%D5%B5%D5%B8%D6%82%D5%B6/